

ՑԱՆՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԶԵՐՄԱՍՏԻԱՆՆԵՐԻ ԱԶԴԻԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՆԻՐԱՆԵՆՈՒ, ԴԵՂՁԵՆՈՒ ԵՎ ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ԼԻՊԻՇԱՅԻՆ
ՆՅՈՒԹԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՕՂԱԿՆԵՐԻ ՎՐԱ.

Արարատյան դաշտավայրում ձմեռային ցածր ջերմաստիճանները և ուշ գարնանային ցրտահարությունները զգալի վնաս են հասցնում ծիրաննեռու, գեղձենու և ցածր ցրտադիմացկունություն ունեցող կուլտուրաներին:

Եթե ուշ գարնանային ցրտահարություններից տուժում է միայն ընթացիկ տարվա բերքը, ապա ձմեռային երկարատև սառնամանիքները բացասաբար են անդրադառնում նաև ծառերի ընդհանուր վիճակի և աճեցողության վրա:

Արարատյան հարթավայրում 1964 թ. հունվարի 25—28-ին վրա հասած սառնամանիքներից վնասվել էին գեղձենիների մինչև 74 և ծիրաննեռու տնկարկների մոտ 39 տոկոսը:

Գյուղատնտեսությանը հասցված վնասները անհետաձելի խնդիր են առաջադրում ուսումնասիրելու ցածր ջերմաստիճանների ազդեցությունը բույսերի բիոքիմիական նյութափոխանակության վրա և մշակելու պայքարի այնպիսի եղանակներ, որոնք նվազագույնի հասցնեն վնասները:

Ցածր ջերմաստիճանների ազդեցության տակ բույսերի մեջ կատարվում են բիոքիմիական խորը փոփոխություններ: Առաջանում են պաշտպանական նյութեր, որոնք ունեն նաև մեխանիկական վնասվածքները արագ վերականգնելու ունակություն:

Բացասական ջերմաստիճանների ազդեցության տակ խախտվում է նյութափոխանակությունը, որի հետևանքով առաջանում է կուտակվում են որոշակի նյութեր:

Բույսերի նյութափոխանակության վրա սառնամանիքների ազդեցությունը լուսաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նվազագույն

շերմաստիճանների անկման մեծությունը և դրան համապատասխանող բիոբիմիական ռեակցիաների գործակիցները, ինչպես նաև ֆիբրմենաների ակտիվության և ֆիզիկական ազդեցության փոփոխությունները: Ընդ որում, ցածր շերմաստիճանների դեպքում հիդրոլիդի ռեակցիաների գործակիցը բիշէ է փոխվում, իսկ լուծելի նյութերի օրսիդացումը գժվարանում է, որովհետև այն կապված է շնչառական ռեակցիաների դանդաղեցման հետ:

Ցածր շերմաստիճանների ազդեցության տակ նկատվում է օնչայի, հեմիցելլուզոզայի հիդրոլիդ և որոշակի շաքարների և օլիգոսախարիդների (ռաֆինոզա, ստախիոզա) կուտակում:

Սպիտակուցային ֆրակցիան նույնպես փոփոխվում է: Ընդ որում անլուծելի սպիտակուցների քանակը նվազում է, իսկ լուծելիներին՝ ավելանում:

Աղատ և կապված ամինոթթունների կազմը հնթարկվում է որակական և քանակական խորը փոփոխությունների: Դրա հետեւանքով առաջանում են որոշ ամինոթթուններ (պրոլին, ամինոկարագաթթու, ամիդներ և այլն):

Բույսերի մեջ տարածված նյութերից են նաև ճարպերը, որոնք պաշտպանական և ընդհանուր նյութափոխանակության կոմպլեքսի մեջ ակտիվ մասնակցություն ունեն:

Ճարպերի հանդիպում են բույսերի արմատներում, քսելեմացում, ֆլուիմայում, տերևներում, պտուղներում՝ հատկապես սերմերի մեջ:

Բջջաթաղանթի կառուցվածքում գտնվող ճարպանյութերը բջջի ընտրողական ներթափանցման պրոցեսում մեծ դեր են կատարում: Խլորոպլաստների մեջ գտնվող ճարպերը (սպիտակուցների և պիգմենտների հետ միասին) հանդիսանում են էներգիա հայթայթող կիսահաղորդիչ սիստեմ: Ճարպերը մասնակցում են նաև սպիտակուցների բիոսինթեզի, իսկ խլորոպլաստների մեջ՝ որոշ հեքսովների և օլիգոսախարիդների (ռաֆինոզայի) սինթեզին: Միտոխոնունդրիաներում և միկրոսոմներում եղած ճարպերը մասնակցում են շնչառական ցիկլին:

Չնայած ճարպերը բույսերի մեջ շատ տարածված են և ակտիվորեն մասնակցում են բազմաթիվ պրոցեսներին, սակայն դեռևս նոր է լուսաբանվում դրանց առաջացման սինման:

Հստ Սքուայրդ և Սթամֆի տվյալների, ճարպերի սինթեզը կա-

տարվում է միասունդրիաներում ու միկրոսոմներում և ուժեղանում է ֆոտոսինթեզի ժամանակ: Պարզվել է, որ ձարպերի սինթեզին զբախավորապես մասնակցում են ացետատ խումբը և պիրոխաղողաթթուն, որոնք լիպիդների նյութափոխանակությունը կապում են ածխացրերի և տրիկարբոնաթթուների նյութափոխանակության ցիկլերի հետ:

Տարբեր կլիմայական պայմաններում փոփոխվում է բույսերի մեջ եղած ձարպերի որակական և քանակական կազմը:

Բացասական չերմաստիճանների ժամանակ բուսական հյուսվածքներում Գենկել-Օկնինան և Մազլիաքը հայտնաբերել են ձարպի կուտակում: Որոշ հեղինակներ նշում են, որ ձարպի բացակայության գեպքում հյուսվածքները մահանում են:

Մի խումբ հեղինակներ բույսերի ցրտադիմացկունությունը, բացի շաքարների ինտենսիվ կուտակումից, բացատրում են նաև ձարպերի կուտակումով: Բացասական չերմաստիճանների աղդեցության տակ ձարպերի առաջացումը ումանք կապում են օւլայի անհետացման երևոյթների հետ: Պեխը բույսերի մեջ ձարպանյութերի առաջացումը կապում է ֆուֆոր-ածխացրային նյութափոխանակության նյութերի հետ, երբ աճման համար վերջիններիս օգտագործումը հանդիպում է որոշ դժվարությունների:


Ըստ Առեգուեն-Լուպանոյի և Բոնըրի տվյալների ցածր չերմաստիճանների գեպքում ֆուֆորիլազաների ակտիվությունը շի թուլանում, բանի որ տվյալ ֆերմենտի ինհիբիտոր հանդիսացող նյութերը բացասական չերմաստիճանների աղդեցության տակ անհետանում են:

Դեռևս Իվանովը նկատել է, որ սառնամանիքների ժամանակ բույսերի ձարպերի մեջ չհագեցած ձարպաթթուների քանակը ավելանում է:

Մաք-Նեերը գտնում է, որ ձարպերի կազմում եղած ձարպաթթուների հագեցվածությունը կախված է միջավայրի չերմաստիճանից: Ըստ Սթամֆի տվյալների, համեմատարար ցածր չերմաստիճանների գեպքում, միտոսունդրիաների մողելային փորձերի ընթացքում, սինթեզվող ձարպերի մեջ գերազանցում են ձարպաթթուները: Մաք Արթուրը, Մարշոն և Նյումանը գտնում են, որ գիշերվաընթացքում հագեցված ձարպաթթուների քանակը ավելանում է, իսկ մոնոգալակտոպիլ գլիցերոլը՝ նվազում:

Պտղատու և խաղողի կուլտուրաների մեջ գտնվող ձարպանյութերը դեռևս քիչ են ուսումնասիրված: Եղած աշխատանքները մեծ

մասամբ կրում են ցիտոլոգիական բնույթ և շնայած դրանց որոշ առավելություններին, ճարպերի որակական և քանակական ցուցանիշները գնահատվում են մոտավոր ձևով։ Ուստի բացասական չերմաստիճանների աղղեցության տակ ծիրանենու դեղձենու և խա-



Նկ. 1. Օդի նվազագույն չերմաստիճանի տատանումը

դողի վաղի լիպիդային նյութափոխանակության բիոքիմիական ուսումնասիրությունը ունի գիտական և գործնական նշանակություն։ Դրա համար ուսումնասիրել ենք աղատ և սպիտակուցների հետ կապված հում ճարպերը (պետրոլինի եթերի մեջ լուծվող ֆրակցիան), արիգլիցերիդները, ֆոսֆոլիպիդները, ինչպես նաև հագեցած և չհագեցած ճարպաթթուների հարաշափությունը։

Մենք խնդիր ենք գրել ուսումնասիրել բացասական չերմաստիճանների աղղեցության տակ վերոհիշյալ նյութերի քանակների տատանման օրինաչափությունները։ Ստացված տվյալները համեմատվել են ավելի բարձր ցրտադիմացկունություն ունեցող կուտուրաների հետ։ Միրանենու և դեղձենու ցրտադիմացկունությունը ար-

Հեստականորեն բարձրացվել է Համբարձումյանի առաջարկած սրսկման միջոցով:

Փորձնական հյուրեր և մերողներ

Ուսումնասիրությունները կատարվել են Արարատյան՝ դաշտավայրի՝ Հոկտեմբերյանի, էջմիածնի, Արտաշատի շրջանների տարեր սովորական միջոցներում և Հայկական ՍՍՀ այգեգործության գիտահետազոտական ինստիտուտի Փարաքարի բազայում՝ ծիրաննենու՝ Երևանի, գեղձենու՝ Նարնջի և Խաղողի՝ Սպիտակ Արաքսենի սորտերի վրա: Դիտումներն սկսվել են 1962—63 թթ. և շարունակվել մինչև 1963—64 թվականները: Նվազագույն ջերմաստիճանների տվյալները բերված են նկար 1-ում: Ըստ որում 1962—63 թթ. ձմեռը եղել է մեղմ, իսկ 1963—64 թթ.՝ խիստ ջափակոր ցրտի ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով որոշ նմուշներ կարձ ժամանակում (-22° -ի տակ՝ 3 ժամ) սառնարանում ցրտահարել ենք:

Ծիրաննենու, գեղձենու և խաղողի վազի ցրտագիմացկունությունը սրսկումների միջոցով բարձրացնելու փորձեր է դրել Մ. Համբարձումյանը: Կուտուրաները սրսկել ենք $1,09\%$ CaCl_2 , $0,75\%$ KNO_3 , $1,44\%$ KBG , հետերոպուքսինի $0,01\%$ ջրային լուծույթներով: RH եղել է $4,8$ — $5,5$:

Նմուշներ վերցրել ենք միամյա ճյուղերից և մատերից հունվարին, փետրվարին և մարտին:

Նմուշները ֆիբսվել են գոլորշիով, չորացվել 80° -ում: Մանրացված փոշին էքստրակցիայի է ենթարկվել Սոկուսի ապարատում: Աղատ ճարպերի էքստրակցիան կատարվել է 24 ժամվա ընթացքում պետրոլինի եթերով (եռ. կ. 50—60): Ընդհանուր ճարպերի էքստրակցիան կատարվել է 12 ժամվա ընթացքում ծծմբական եթեր-սպիրտով (3:1), 60° -ում 3 ժամում 95% սպիրտով ճարպսպիտակուց կապը խախտելուց հետո:

Վերջում էքստրակտները լվացվել են պետրոլինի եթերով: Միացված ճարպերի էքստրակցիան կատարվել է աղատ ճարպերի մնացորդի վրա: Այս նպատակով մնացորդը 95% սպիրտով 12 ժամում սկզբում տաք էքստրակցիայի է ենթարկվել, այնուհետև էքստրակցիան շարունակվել է ևս 12 ժամ՝ ծծմբական եթեր-սպիրտ (3:1) լուծիչով: Վերջում էքստրակտը լվացել են պետրոլինի եթերով:

Պետրոլինի եթերի մեջ լուծված էքստրակտներում մեր կող-

մից հարժարեցված եղանակներով կատարվել են տարբեր հետազոտություններ:

Ուսումնասիրվել է բացասական շերմաստիճանների ազդեցությունը ծիրանենու, դեղձենու և խաղողի բնական նմուշների և սրսկված բուլսերի վրա:

Ցածր ջերմաստիճանների ազդեցությունը ծիրանենու,
դեղձենու և խաղողի շիվերի նարպերի
նյուրափոխանակուրյան վրա

1. Հում նարպեր (պետրոլինի եթերի մեջ լուծվող ֆրակցիա):
Հում նարպերի գինամիկան ուսումնասիրելիս ազատ և միացված
նարպերի ֆրակցիաները որոշվել են առանձին-առանձին:

Ա դ յ ո ւ ս ա կ 1

Ազատ նարպերի ժանակի տատանումները

Տեսակներ	Տարեթիվ	Շարպերի %-ը		
		հունվար	փետրվար	մարտ
Ծիրանենի	1963	2.05	1.98	1.98
»	1964	1.87	5.4	—
Դեղձենի	1963	1.77	—	2.08
»	1964	2.93	4.4	—
Խաղողի վաղ	1963	0.74	0.59	—
»	1964	2.2	1.9	2.2

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, դեղձենու և ծիրանենու մոտ 1963 թ. մեզմ ձմռան պայմաններում՝ հունվար, փետրվար և մարտ ամիսներին ազատ նարպերի քանակը էական փոփոխության շի ենթարկվել: Մինչդեռ 1964 թվականի խստաշունչ ձմռանը՝ երկարատև ցրտերի ազդեցության տակ հունվարի սկզբներին ազատ նարպերի քանակը արագ աճում է: Խաղողի մոտ 1969 թվականին այս օրինաշափությունը շի նկատվում և հետազոտվող բոլոր նմուշներում հայտնաբերվել են համարյա նույն քանակությամբ ազատ նարպեր: Բերված տվյալներից երևում է, որ 1964 թ. հունվարին խաղողի վաղի նարպերի քանակը, 1963 թ. համեմատությամբ, 3 անգամ աճել է: Պետք է հնթաղորել, որ մինչև 1964 թ. հունվար ամիսը խաղողի նմուշը արդեն ցրտահարված է եղել:

Միացված նարպերի բանակի տառանումները (1964 թ.)

Տեսակներ	Ճարպերի % -ը	
	Հունվար	Գետափար
Միրանենի	1.6	2.6
Դեղձնի	1.8	3.5
Խաղողի վաղ	1.9	1.9

Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ ցրտերի ազդեցության տակ միացված ճարպերի քանակը նույնապես աճում է: Վերաբռնում նշված խաղողի աղատ ճարպի մասին օրինաշափությունը կրկնվում է նաև միացված ճարպի համար:

Ա գ լ ու ս ա կ ե զ 3

Արմեսական կարնառի ցրտի (-22°C , 3 ժամ) ազդեցությունը
ընդհանուր և աղատ նարպի բանակների վրա

Տեսակներ	Աղատ ճարպի % -ը		Ընդհանուր ճարպի % -ը	
	ստուգիչ	ցրտ.	ստուգիչ	ցրտ.
Միրանենի	1.98	2.09	2.1	2.7
Դեղձնի	1.77	2.01	2.2	2.6
Խաղողի վաղ	0.75	0.75	1.8	2.8

Աղյուսակ 3-ում նշված արդյունքները ցույց են տալիս, որ շնայած կարճատև ցրտերը քիչ են ազդում աղատ ճարպի քանակի վրա, սակայն ճարպի ընդհանուր քանակը ի հաշիվ միացված ֆրակցիայի զգալի կերպով ավելանում է:

Մեր փորձերը հաստատում են մի շարք հեղինակների այն կարծիքը, որ ծառատեսակների ձյուղերի մեջ ճարպի քանակը ցրտի ազդեցության տակ ավելանում է: Ուսումնասիրություններից պարզվեց, որ միացյալ ճարպերը շափակոր ցրտից ավելանալու հակում ունեն: Ուրեմն ցուրտը իշեցնում է ճարպերի օգտագործման ռեակցիաների գործակիցը առաջին հերթին միացյալ ճարպերի մեջ, իսկ ավելի ցածր չերմաստիճանների դեպքում՝ աղատ ճարպերի մեջ:

2. Տրիգլիցերիդներ: Ինչպես հայտնի է, հում ճարպերի քանակը որոշելիս պետք է իրերի մեջ ճարպերից բացի լուծվում են նաև ուրիշ նյութեր: Թիմիապես խակական ճարպեր ներկայացնող նյութերը հանդիսանում են տրիգլիցերիդներ, որոնց որոշման արդյունքները բերված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Յրտի ազդեցության տակ տրիգլիցերիդների քանակի տատանումները (1964 թ.)

Տեսակներ	Աժանթիվ	Տրիգլիցերիդների % % -ը		
		ընդհանուր ճարպերում	ազատ ճարպերում	միացված ճարպերում
Երանենի	6/1	5,3369	0,2281	0,1088
Դեղնի	18/2	5,2872	0,2170	0,0702
Դեղնի	4/2	1,1494	1,0	0,1494
Խաղողի վաղ	13/2	0,8355	0,79	0,0455
Խաղողի վաղ	3/1	1,1103	1,04	0,0703
»	18/2	0,1938	0,1596	0,0342

Յրտի ազդեցության տակ, հում ճարպի ավելանալուն հակառակ, տրիգլիցերիդները նվազում են: Զնայած խաղողի հում ճարպը քանակապես համարյա չի փոխվում, սակայն նրա մեջ պարունակվող տրիգլիցերիդները զգալի կերպով նվազում են: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ յրտի ազդեցության տակ հում ճարպի քանակի ավելացումը ի հաշիվ եղած ճարպերի չի կատարվում: Դա լինում է ճարպանման ուրիշ նյութերի հաշվին, որոնց մեջ ֆուֆոլիպիդների հետ միասին հանդիպում են մոնո և դիգլիցերիդները և դրանց դերիվատները: Պետք է ենթադրել, որ դիխավորապես տեղի են ունենում մոնո և դիգլիցերիդների կուտակումները:

Սա հաստատվում է Բասթի, Բենսոնի և այլ հեղինակների տրվածական համաձայն որի ցածր ջերմաստիճանում կուտակվում են մոնո և դիգլակտոպիլ գլիցերիդ պարունակող նյութեր:

3. Ֆուֆոլիպիդներ: Հում ճարպի մեջ մտնող ճարպանման առավել ակտիվ նյութերից են ֆուֆոլիպիդները:

Ցրտի ազդեցության տակ ֆուֆոլիպիդների բանակի տառանաւմները

Տեսակներ	Ամսաթիվ	Ֆուֆոլիպիդի % -ը		
		Բնդհանուր ձարպերում	ազատ ձարպերում	միացված ձարպերում
Միքանենի	6/1	0.68	0.42	0.26
>	18/2	0.08	0.08	0.0
Գեղձենի	4/1	2.25	1.95	0.28
>	13/3	1.18	0.38	0.60
Խաղողի վազ	3/1	0.40	0.45	0.05
>	18/2	0.80	0.27	0.53

Աղյուսակ 5-ի տվյալները ցույց են տալիս, որ ցածր չերմաստիճանների ազդեցության տակ ֆուֆոլիպիդների քանակը նվազում է (բացառությամբ խաղողի), որը բնական երկույթ է: Ֆուֆոլիպիդները մասնակցում են ածխաջրային մետաբոլիզմին: Ինչպես հայտնի է, գլիցերոֆուֆատները, ֆուֆոլիպիդները հանդիսանում են ածխաջրի պաշար: Ֆուֆորիլազների ակտիվությունը ցածր չերմաստիճաններում չի նվազում ինչիրտորների անհետացման պատճառով, այսպիսով ֆուֆոլիպիդները ուժեղ քայլայվում են:

4. Ճարպարբուների հագեցվածությունը: Բացասական չերմաստիճաններից ձարպերի մեջ գտնվող հագեցած և չհագեցած ճարպաթթուների հարաբերությունը խախտվում է:

Ցրտի ազդեցության տակ հարպի մեջ յողի բանակի տառանաւմները

Տեսակներ	Ամսաթիվ	Ցողի թիվը	
		ազատ ձարպերում	միացված ձարպերում
Միքանենի	6/1-64	79	40.7
>	18/2-64	70.5	28.0
Գեղձենի	4/4-64	58	41.0
>	13/2-64	89	22.0
Խաղողի վազ	3/1-64	46	39
>	18/2-64	55	43

Աղյուսակ 6-ում թերված յոդի թվի փոփոխությունը ցուց է տալիս ճարպաթթուների հագեցվածության աստիճանը: Յոդի թվի ավելացումը շագեցված ճարպաթթուների քանակի ավելացման հետևանք է:

Հունվարի երկարատև ցրտերի ազդեցության տակ փետրվարին վերցված նմուշներում ազատ ճարպերը հարստանում են շագեցած ճարպաթթուներով, իսկ միացված ճարպերի մեջ կուտակվում են հագեցած ճարպաթթուները: Խաղողի միացված ճարպերում նկատվում է աննշան փոփոխություն:

Արհեստական կարճատև ցրտահարության դեպքում դեղձենու ընդհանուր ճարպերի մեջ յոդի քանակում նկատվում է նույն անկումը, իսկ ազատ ճարպերինը համարյա փոփոխության շի ընթարկվում: Խաղողի ազատ ճարպերի մեջ յոդի թիվը նույնպես նվազում է (տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Արհեստական ցրտի ազդեցուրյունը ընդհանուր և ազատ ճարպերի մեջ պարունակվող յոդի բանակի վրա (-22°C , 3 ժամ)

Տեսակներ	Ամսաթիվ	Ց ռ դ ի թ ե վ ը			
		ազատ ճարպերում		ընդհանուր ճարպերում	
		ստուգիչ	ցրտահ.	ստուգիչ	ցրտահ.
Դեղձենի	22/1-63	115	113	98	37
Խաղողի գաղ	23/1-63	133	79	81	34

Հստ իվանովի և ուրիշների ցածր ջերմաստիճանի ազդեցության տակ բույսերի ճարպերի մեջ ավելանում են շագեցած ճարպաթթուները: Ընդհակառակը, Սթամֆը գտնում է, որ միտոխոնդրիաների օգնությամբ սինթեզվող ճարպերը համեմատարար ցածր ջերմաստիճաններում ավելի շատ հագեցած ճարպաթթուներ են պարունակում: Պետք է ասել, որ միացված ճարպերը առաջին հերթին կապված են այն օղակների հետ, որտեղ անմիջապես սկիզբ է առնում ճարպաթթուների սինթեզը: Առաջին էտապում գերակշռում են ցածր մոլեկուլար հագեցած ճարպաթթուները, որոնք հետագայում վեր են ածվում բարձր մոլեկուլար շագեցած ճար-

պաթթուների: Մաք-Արթուրը միաժամանակ գտնում է, որ առանց ֆոտոսինթետիկ ապարատի առաջացած ճարպաթթուները մեծ մասմբ բաղկացած են հագեցած ճարպաթթուներից:

Աղյուսակ 6-ի և 7-ի տվյալներից եզրակացնում ենք, որ կապված ճարպերում թույլ կամ ուժեղ ցրտահարումները միշտ եւ նվազեցնում են չհագեցած ճարպաթթուների քանակը, իսկ ուժեղ ցրտահարումները աղատ ճարպերի մեջ ավելացնում են ոչ հագեցած ճարպաթթուների քանակը:

Իվանովի դիտումները թվում է վերաբերում են ուժեղ ցըրտերից աղատ ճարպերի մեջ յոդի թվի ավելացմանը:

Աղատ ճարպերում չհագեցած ճարպաթթուների աճը, որը տեղի է ունենում միմիայն ուժեղ ցրտի ազդեցության տակ, կարելի է վերաբեր չհագեցած ճարպաթթուների օգտագործման ռեակցիաների գործակցի անկմանը կամ այն վերափոխող ֆերմենտների թուլացմանը:

Բացասական չերմաստիճանների ազդեցուրյունը ցրտադիմացկուն (սրսկված) նմուշների վրա

1. Հում ճարպեր: Ինչպես երեսում է աղյուսակ 8-ից, 1964 թ. երկարատև ցրտերից աղատ և միացված ճարպերի քանակը փետրվարին արագ աճում է ինչպես սրսկված բռյաներից վերցված նմուշներում, այնպես էլ շարսկված (ստուգիլ) նմուշներում: Սակայն, սրբսկված նմուշներում ճարպի քանակը ստուգիլից փոքր-ինչ պակաս է: Այս հանգամանքը ավելի ցայտուն է արատհայտվում միացված ճարպերի ֆրակցիայում:

Խաղողի նմուշի մեջ առանձին փոփոխություններ չեն նկատվում: Նման օրինաշափություն դիտվում է, եթե նմուշներն արհետականորեն կարծատե ցրտահարում ենք (-22° -ի տակ 3 ժամ տեղողությամբ, տե՛ս աղ. 9): Այս դեպքում տարրերությունները թույլ են արտահայտվում:

Ինչպես բնական, այնպես էլ սրսկումների շնորհիվ ցրտադիմացկուն դարձած թույլաբում ցրտերը ճարպերի ինտենսիվ առաջացման խթան են հանդիսանում: Թվում է, թե սրսկած թույլը հա-

ՑՐՄԻ ԱՋԴԵԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԺ ԵՎՐԱՊԻ ՖԱՆԱԿԻ ՎՐԱ

Տեսակներ	Ամսաթիվ	Հ Ա Մ Ա Ր Ա Ւ Ւ Յ Ե Ր Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ծ			
		աղատ ճարող		միացված ճարպեր	
		ստուգիչ	սրսկած	ստուգիչ	սրսկած
Միքանենի .	6/1—64	1,87	1,98	1,6	1,8
" " 18/2—64	5,4	4,2	2,6	2,09	
Դեղձենի .	3/1—64	2,93	2,93	1,8	2,1
" " 13/2—64	4,4	3,84	3,5	2,9	
Խաղողի վաղ	3/1 64	2,2	1,9	1,9	1,9
" " 18/2—64	1,9	0,4	1,9	1,9	

ԱՐԵՍՄԱԿԱՆ ՑՐՄԻ ԱՋԴԵԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԺ ԵՎՐԱՊԻ ՖԱՆԱԿԻ ՎՐԱ

Տեսակներ	Ամսաթիվ	Ճ Ա Ր Ա Վ Ա Ւ Յ Ե Ր Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ծ							
		աղատ ճարպեր				ընդհանուր ճարպեր			
		ստուգ.	սրսկ.	ստուգ.	սրսկ.	ստուգ.	սրսկ.	ստուգ.	սրսկ.
Դեղձենի .	24/1—63	1,77	2,01	1,76	2,19	2,2	2,6	3,1	2,71
Խաղողի վաղ	23/1—63	0,75	0,75	0,76	0,69	6,7	1,8	1,67	1,7

Կում ունի իր հնարավորություններն ավելի խնայելու և որակավորելու այն ճարպը, որը սինթեզում է:

2. ՏՐԻԳԼԻՖԵՐԻ ԲՆԵՐ: Չարսկած ստուգիչ նմուշների վրա կատարած փորձերը ցույց են տալիս, որ ցրտերի աղջեցության տակ դրանց մեջ պարունակվող տրիգլիֆերի դների քանակը (տե՛ս աղ. 4) ծախսվում է:

Սրսկումների միջոցով ցրտադիմացկուն դարձած կուտուրա-

Ների շվերի մեջ տրիգլիցերիդների քանակը, ընդհակառակը, աճում
է: Բացառություն է կազմում խաղողի վաղը (տե՛ս աղ. 10):

Աղյուսակ 10

Ցածր չերմաստիճանի ազդեցուրյանը արիգլիցերիդների բանակը վրա
(սրբկած նմուշներ)

Տեսակներ	Աժամաթիվ	Տրիգլիցերիդների %/օ-ը		
		ընդհանուր ձարպերում	ազատ ձարպերում	միացված ձարպերում
Միքանենի	6/1-64	0.3755	0.8247	0.0508
"	18/2-64	5.9680	0.9480	0.020
Դեղձենի	4/1-64	5.9181	0.790	0.1281
"	13/2-64	1.450	1.270	0.1450
Խաղողի վաղ	3/1-64	0.9759	0.880	0.0959
"	18/2-64	0.5089	0.412	0.0969

Տրիգլիցերիդների ավելացումը կարելի է դիտել որպես ձարպի որպակի բարելավման փաստ: Դրանց քանակը համարյա թե հանում է հում ձարպի քանակին, որի հետևանքով պակասում է մոնո և դրիգլիցերիդների քանակը:

3. Ֆոսֆոլիպիդներ: Շատ հետաքրքիր օրինաշափություն է ըստացվում ֆոսֆոլիպիդների ուսումնասիրության ժամանակ: Ցրտերի ազդեցության տակ, ինչպես ցույց է տրված աղ. 5-ում, տեղի է ունենում ֆոսֆոլիպիդների քանակի անկում: Չնայած սրսկված նմուշներում այս անկումը մեծ մասամբ նորից նկատվում է, բայց ավելի թույլ է և դրանց մակարդակը պահպանվում է որոշ բարձրության վրա (տե՛ս աղյուսակ 11):

Ցրտի ազդեցուրյանը ֆոսֆոլիպիդների բանակը վրա (սրբկած նմուշներ)

Աղյուսակ 11

Տեսակներ	Աժամաթիվ	Ֆոսֆոլիպիդի %/օ-ը		
		ընդհանուր ձարպերում	ազատ ձարպերում	միացված ձարպերում
Միքանենի	6/1-64	0.25	0.12	0.13
"	18/2-64	0.39	0.30	0.09
Դեղձենի	3/1-64	2.93	2.68	0.25
"	13/2-64	1.33	1.0	0.33
Խաղողի վաղ	3/1-64	0.55	0.0	0.55
"	18/2-64	0.50	0.42	0.08

Նիրանենու մոտ նկատվում է ֆոսֆոլիպիդների ոչ թե պակասում, այլ մի փոքր ավելացում: Այսպիսով, բույսի նյութափոխանակության համար անհրաժեշտ ֆոսֆոլիպիդները ունեն ավելի բարձր մտկարգակի:

4. ճարպաբրուների նազեցվածությունը: Ինչպես բնական՝ ըստողիլ նմուշներում (աղյուսակ 6 և 7), այնպես էլ սրսկված՝ ցըրտադիմացկունների մոտ, երկարատև ցրտից բույսերը հակում ունեն միացված ճարպերում նվազեցնելու շհագեցած ճարպաթթունների քանակը, իսկ ազատ ճարպերի մեջ, ընդհակառակը՝ դրանք ավելացնելու:

Աղյուսակ 12

Տեսակներ	Աժամաթիվ	Ցողի թիվը	
		ազատ ճարպերում	միացված ճարպերում
Միրաների	6/1	54	43,6
»	18/2	77	29
Դեղձենի	3/1	76	48
»	13/2	106	34
Խաղողի վաղ	3/1	58	30,9
»	18/2	90	31

Աղյուսակ 12-ի տվյալներից երևում է, որ ուժեղ ցրտից հետո, փետրվարին, սրսկված դեղձենու մոտ միացյալ ճարպում յոդի թիվը իջնում է 29%-ով ստուգիլ, չսրսկված նմուշի 46%-ի փոխարեն: Այս հանդամանքը արհեստական կարճատև ցրտահարման դիպում ավելի ուժեղ է արտահայտվում:

Աղյուսակ 13

Արենստական կարտանե ցրտի ($-22,9^{\circ}$ -ի տակ 3 ժամ տևողությամբ)
ազդեցությունը յոդի հանակի վրա (սրսկված նմուշներ)

Տեսակներ	Ցողի թիվը			
	ազատ ճարպերում		ընդհանուր ճարպերում	
	ստուգիլ	ցրտ.	ստուգիլ	ցրտ.
Դեղձենի	102	107	94	82
Խաղողի վաղ	148	108	72	41

Այսպես, ցրտադիմացկունության բարձրացումով բուլսը կարողանում է բարելավել միացված ճարպերի կազմի մեջ մտնող ճարպաթթուների, ցածրամոլեկուլյար հագեցած ճարպաթթուների որակը, ցածրամոլեկուլյար հագեցած ճարպաթթուներից դրանք հասցնելով բարձրամոլեկուլյար հագեցած ճարպաթթուների:

Սիրանի և խաղողի դեպքում այս օրինաչափությունը չի պահպանվում:

Արդյունքների հնեարկումը

Ստացած արդյունքները վերլուծելիս հաշվի է առնվել մի կողմից բացասական չերմաստիճանների շափն ու տևողությունը, մյուս կողմից՝ կուլտուրայի առանձնահատկությունները:

Փորձի առաջին տարին եղել է մեղմ ձմեռ: Արհեստականորեն ցրտահարելիս ազգել ենք նաև կարճատեև և չափավոր ցրտերով: Սիրանենին (Երևանի), դեղձենին (Նարնջի) և խաղողի վազը (Սպիտակ արաքսենի), լինելով ոչ ցրտադիմացկուն կուլտուրաներ, ցրտադիմացկունության տեսակետից մեկը մյուսից տարրերվում են: Կարելի է ասել, որ ծիրանենին ավելի է դիմանում ցրտին, քան դեղձենին, դեղձենին ավելի՝ քան խաղողի վազը: Ֆիզիոդիական տեսակետից էլ ծիրանենին ավելի շուտ է մտնում հանդստի շրջանը, քան դեղձենին ու խաղողը, իսկ վերջինս ավելի շուտ է սկսում անցնել վեգետացիայի:

Համբարձումյանի սրսկումների եղանակով ցրտադիմացկունության արհեստական բարձրացումը առավելանու օժանդակում է ծիրանենուն և դեղձենուն, իսկ խաղողի վազին՝ միայն 20%-ով: Սրսկումները տվյալ կուլտուրաները պաշտպանում են միայն գարնանային ցրտահարություններից: Սրսկումներով խիստ երկարատեև ցրտահարումների դեմ պայքարելը հնարավոր չէ: Հետեւաբար, եթե 1962—1963 թթ. մեղմ ձմեռն պայմաններում կատարված փորձերից աշքի ընկնող արդյունքներ չեն ստացվել, ապա 1963—64 թթ. խիստ ձմոանը, ընդհակառակը, ստացվել են առավել արդյունքներ, որոնք երբեմն վերաբերում են մասամբ կամ լրիվ վնասված բուլսների նմուշներին: Այս երեսույթը հնարավոր է բացատրել 1962—63 թթ. ձմոանը արհեստական կարճատեև ցրտահարման ենթարկված նմուշների մեջ առաջացած փոփոխություններով:

Դատելով լիսիդային նյութափոխանակության տեսակետից,

այստեղ ես, ինչպես ածխաջրային և սպիտակուցալին նյութագու-
խանակության ժամանակ, նկատվում է ընդհանուր մեխանիզմի
խախտում, որը կարելի է բացատրել ցածր ջերմաստիճանում՝
ա) բիոբիմիական ռեակցիաների գործակիցների փոփոխությամբ,
բ) հանգստի շրջանում, վեգետացիոն շրջանի համեմատությամբ,
շնչառական սիստեմի թուլացման հետ կապված, օքսիդացման
ռեակցիաների դանդաղեցումով, որով կոնդենսացման ռեակցիայի
համար իր կողմից հայթալթվող էներգիան պակասում է: Տվյալ
դեպքում աշխատում են հիդրոլազները:

Ընդհանուր առմամբ բացասական ջերմաստիճանների ազդե-
ցության տակ նկատվում է գոյություն ունեցող տրիգլիցերիդների
ծախսում, մոնո և դիգլիցերիդների սինթեզ հավանաբար առաջին
էտապի ցածր մոլեկուլյար հագեցած ճարպաթթուներից, որոնք ա-
վելի մեծ կոնդենսացման շեն ենթարկվում: Տեղի է ունենում ֆու-
ֆոլիպիդների ինտենսիվ հիդրոլիզ:

Սրսկումների շնորհիվ ցրտադիմացկունության բարձրացու-
մով նկատվում է տրիգլիցերիդների, ֆոսֆոլիպիդների և ճարպա-
թթուների հագեցվածության փոփոխություն: Թվում է, թե բույսը
փորձում է մտնել նորմալ հունի մեջ: Օքսիդացման ռեակցիաների
ակտիվացման հետ միասին ճարպաթթուների սինթեզը ցածր մո-
լեկուլյար հագեցած ճարպաթթուներից անցնում է բարձր մոլե-
կուլյար շհագեցած ճարպաթթուների, որոնցից կազմվում են
առավելապես տրիգլիցերիդները, իսկ մոնո և դիգլիցերիդների քա-
նակը նվազում է: Ցրտերի ազդեցության տակ ֆոսֆոլիպիդների ին-
տենսիվ քայլայումը արգելակվում է հավանաբար ֆոսֆորիլազա-
ների ինհիբիտորների երևան գալու շնորհիվ:

Ֆոսֆոլիպիդները շատ կարևոր նյութեր են: Սրանք կազմում
են բջջաթղանթի, միտոսիոնդրիաների, միկրոսուների, ինչպես
նաև բջջի այլ կոմպոնենտների օրգանական մասը: Ֆոսֆոլիպիդ-
ների լրիվ քայլայումից բջջը մահանում է, ուստի դրանց հիդրո-
լիզի արգելակումը բջջի համար ունի վճռական նշանակություն:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Ցածր ջերմաստիճանը խախտում է լիպիդային նյութա-
փոխանակության նորմալ ընթացքը: Գերակշռում են հիդրոլիտիկ
ռեակցիաները: Որոշ նյութերի (ֆոսֆոլիպիդներ) քայլայումն այն

աստիճանի է հասնում, որ վնասում է հյուսվածքների նորմալ վիճակը: Նվազում է հագեցած ճարպաթթուների քանակը, ցածր մոլեկուլայի հագեցած ճարպաթթուներ պարունակող մոնո և դիզլիցերիդների ավելացման շնորհիվ աճում է հում ճարպի քանակը:

2. Սրսկումները օժանդակում են բույսին՝ սահմանափակելու հիդրոլիտիկ և համեմատաբար ուժեղացնելու սինթետիկ ռեակցիաները, որոնք նպաստում են պոտենցիալ նյութեր կուտակելուն: Ֆուֆոլիպիդների ծախսը սրսկված նմուշներում, բնական նմուշի համեմատությամբ, խնայվում է: Կուտակվում է ավելի քիչ հում ճարպ, որը պարունակում է բարձր մոլեկուլայի շնագեցած ճարպաթթուներ: Տրիգլիցերիդների քանակը աճում է, իսկ մոնո և դիզլիցերիդների հավանական քանակները նվազում են:

ВЛИЯНИЕ ХОЛОДА НА НЕКОТОРЫЕ ЗВЕНЬЯ ЖИРОВОГО ОБМЕНА В ПОБЕГАХ ПЕРСИКА, АБРИКОСА И ВИНОГРАДА

(Р е з ю м е)

Закономерности превращения жиров в побегах плодовых под воздействием холода являются чрезвычайно важным звеном веществ в проблеме зимостойкости.

В данной работе приведены результаты по изучению жирового обмена в побегах абрикоса сорта Еревани, персика Наринджи и винограда Араксени белый в условиях мягкой зимовки 1962—1963 г.г. и крайне суровой зимы 1963—1964 гг. Изучению были подвергнуты контрольные и опрыснутые смесью ст. научн. сотрудника Амбарцумяна М. А. образцы растений для повышения устойчивости растений к морозам. Опыты проводились в естественных условиях и после кратковременного искусственного воздействия холодом.

Нами проводилось раздельное изучение свободных и связанных жиров. В составе каждого из них определялось количество триглицеридов, фосфолипидов и соотношение насыщенных и ненасыщенных жирных кислот.

Проведенные нами исследования показали, что под воздействием холода повышается общее количество «сырого» жира за счет накопления моно- и диглицеридов, в составе которых много низкомолекулярных насыщенных кислот. При этом количество триглицеридов уменьшается.

Кроме того кратковременные воздействия отрицательных температур вызывают понижение ненасыщенных жирных кислот только в связанных, а продолжительные воздействия повышают их количество и в свободных жирах. Под влиянием холода количество фосфолипидов уменьшается вследствие нарушения их синтеза в результате понижения АТФ и продолжения гидролитических реакций, на которые холод не влияет.